ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4322-Ա «07» նոյեմբերի 2024 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ ՄԻ ՇԱՐՔ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆՈՂ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանի 7-րդ կետով.

1. Հաստատել Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ենթակայությամբ գործող «Երևանի հ. 156 մսուր-մանկապարտեզ», «Երևանի հ. 157 մսուր-մանկապարտեզ», «Երևանի հ. 158 մսուր-մանկապարտեզ», «Երևանի հ. 159 մսուր-մանկապարտեզ», «Երևանի հ. 160 մսուր-մանկապարտեզ» «Երևանի հ. 161 մսուր-մանկապարտեզ» և «Երևանի հ.162 մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոններն զբաղեցնելու համար 2024 թվականի նոյեմբերի 8-ին ժամը 11:00-ին նախատեսված մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի կազմը (կցվում է):

2.Մրցութային հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկումն իրականացնելու համար Երևանի քաղաքապետի կողմից հանձնաժողովի քարտուղար նշանակել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մարդկային ռեսուրսների կառավարման վարչության գլխավոր մասնագետ Արևհատ Բաղդասարյանին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ